ՈՐՔԱՆՈՑՆԵՐ

1896 թուականը մի նշանաւոր տարի էր տաճկահայ ժողովրդի համար իւր մեծամեծ թշուառութիւններով, որոնք պատահեցան մեր տարաբնակ եղբայրներին։ Ցայտնի դէպքերից յետոյ, որոնց յիշատակութիւնն իսկ արցունք է հոսեցնում ամեն մի խիղճ ունեցող անհատի աչքերից, որբերի ու այրիների մի ամբողջ սերունդ առաջ եկաւ ազգի մէջ, աղքատ ու անօգնական, մերկ, անօթի և զուրկ կեանքի, ապրելու ամեն յարմարութիւններից։ Այդ որբերի և այրիների թիւը շատ աւելի մեծ է, քան թէ կարող էինք ենթադրել։ Մենք հետաքրքրուեցանք այդ գործով և մեր հաւաքած տեղեկութիւններից երևեցաւ, որ Տաճկահայաստանում այսօր նորա հետևեալ կերպով են բաժանուում.

Մուշ	6632	որբ	կայ և	3668	այրի
Վան	6000	»	»	4000	»
Եդեսիա	4128	»	»	1257	»
Տիգրանակերտ	2344	»	»	1288	»
Ակաբկեր	2102	»	»	863	»
Խարբերդ	2021	»	»	624	»
Մալաթիա	1855	»	»	837	»
Բաղէշ	1649	»	»	772	»

Ակն	1219	»	»	560	»
Կիւրիւն	1165	»	»	725	»
Սեբաստիա	1053	»	»	650	»
Երզնկա	975	»	»	315	»
Եւդոկիա	975	»	»	265	»
Ամասիա	550	»	»	230	»
Այնթապ	536	»	»	125	»
Քղի	523	»	»	180	»
Զէյթուն	445	»	»	325	»
Մարաշ	425	»	»	274	»
Տիվրիկ	362	»	»	142	»
Կարին	365	»	»	152	»
Չորուշ Ահիշ	335	»	»	301	»
Առանա	303	»	»	145	»
Սղկրդ	145	»	»	70	»
Չապին Գարահ.	117	»	»	55	»
Հաճըն	65	»	»	32	»
Քիլիս	60	»	»	35	»
Քէմախ	15	»	»	10	»

Ուրեմն ներկայումս ապացուցուած օգնութեան կարօտ որբերի թիւն է 36,355 հոգի, իսկ այրիներինը 17,900, որ ընդ ամենը կազմում է 54,255 անձանց մի պատկառելի թիւ։

Հէշտ է արտասանելը 55,000 սովեալ և մերկ. քանի՛ քանիներ դոցանից աղէխարշ արտասուք են թափել և թափում, ինչ հառաչներ ու ողբեր, ինչ սրտաճմլիկ մրմունջներ են դուրս թռչում որդեսէր և այրակորոյս մօր շրթունքից, երբ սեղմում է նա կրծքին սիրունիկ և մերկիկ իւր մանկան, որ լալագին «հաց» է խնդրում դառնացած մայրիկից։

Սոցա օգնել պէտք էր, հաց տալ, ընակարան, հագուստ և վերջապէս որբերին կրթութիւն. և մինչև որ

հայր կը զարթնէր իւր թմրութիւնից, կըսթափուէր կրած նեղութիւններից և վերջապէս կարճնանար նորա մէջ հասարակական ոգին, որով զօրեղ են մարդիկ և կարող բնութեան ամեն հարուածների ու թշուառութեանց դիմանալու և յաղթելու, մինչև, ասում ենք, հայը կը բանար իւր աչքը, համոզ պատառը ախորժ թուեցաւ վարպետ որսորդներին և ահա անհովիւ հայ ժողովրդի մէջ հանդէս եկան օտար մարդոցներ — բողոքական միսսիօնարներ և հայութեան ուխտեալ թշնամի կաթոլիկ եզուիտներ, որոնց յատկանիշն է օգուտ քաղել հանգամանքներից և աննշան նպաստներով մեծամեծ շահեր վաստակել, հանդէս եկան նորա և Հայաստանը լցուեցաւ անթիւ քարոզիչներով։

Նոցա աչալրջութիւնից չվրիպեցաւ այն միակ և օրինաւոր միջոցը, որով կարելի էր անդրանիկ մի քրիստոնեայ ազգի այս դժբաղդ մնացորդներին միանգամայն հեռացնելու իւր սիրած ու փայփայած եկեղեցուց. և այդ միջոցն էր յատուկ որբանոցներ բանալ, հաստատութիւններ՝ ուր հացի ու հագուստի հետ սկսեցին «Աստուծոյ բանը» ևս ներշնչել հայ մանուկներին նոցա յանդգնութիւնը հասաւ մինչև այնտեղ, որ չբաւականանալով իրանց սեպհական որբանոցներով՝ վստահութիւն ունեցան դիմել հայ հոգևոր վարչութեան և խնդրել որ իրենց յանձնուին հինգ էս հայ որբերն, այնպէս էլ Գարագի և այլ հնադարեան ու հռչակաւոր վանքերը, իրենց ամբողջ պատկանելութեամբ և մերայինների հեռատեսութեանը ենք պարտական, եթէ այսօր այդ վանքերը մի մի որջ չեն կաթոլիկութեան և բողոքականութեան տարածման։ Բայց ամենից վտանգաւոր էր մարդոցների այն ձեռնարկութիւնը, որ նորա կազմակերպեցին եւրոպական դանազան կենտրոններում բազմաթիւ որբանոցներ և հայոց աշխարհից ուղարկելով այնտեղ խումբ խումբ տղայ ու աղջիկ որբեր՝ սկսեցին խնամել նոցա այնտեղ՝ նախա-

պէս ստիպելով նոցա թողնելու իրանց մայրենի լեզուով խօսակցութիւնը։

Այսպիսիք բոլորովին կորչելու վերայ են հայութեան համար։ Սակայն մեզ թւում է, թէ կորած պիտի համարել նաև այն բոլոր որքերին, որոնք գտնւում են առհասարակ այս կամ այն քարոզչական հիմնարկութեանց մէջ։ 1898 թուի ամառը մեր աչքով տեսանք Տրապիզոնի կաթոլիք-եզուիթ միսսիօնարներին հայկական որբանոցի սաների հետ, որոնց արգիլուած էր իսպառ հայերէն խօսել և, ինչ ենք ասում, ինչու ենք մանուկների վերայ խօսում, ասոն հոգուց բաղկացած պատերների մէջ միակ հայ պատերը – ֆռէդ Փոզէֆր, – որ Խարբերդի հաւատուրաց հայ քահանան է, ջանջանուած ֆրանսիերէնը նախընտրում էր հայերէնի, հայ սանիկների հետ խօսած ժամանակ։

Սակայն պէտք էր վերջապէս երևան գար հասարակական ոգին, հայի ինքնաճանաչութիւնը. և ահա տեսնում ենք ազգային վարչութեանց, այլևայլ անհատների և լրագրութեան կողմից լուրջ խորհրդածութիւններ ժամանակի այդ անհրաժեշտ կարեաց մասին և առաջարկւում է վերահաս վտանգի առաջն առնելու իբրև ամենանպատակայարմար միջոց՝ մեր վանքերն այն դրութեան վերածել, որ նոքա կարող լինին իրանց նախկին դրութեան անդրադառնալ, իրանց բուն նպատակին ծառայել և այժմեան տագնապալից օրերում որբախնամ հաստատութիւնների փոխարինել։

Այո, նախկին դրութեան անդրադառնան, որովհետև յայտնի է արդէն, որ մեր վանքերն իսկապէս մարդասիրութեան վայրեր են եղել ի հնումն և ոչ այժմեան նման մի մի վարդապետով ու փոքրաւորով աւերման և անգործութեան ենթակայ. իսկ և իսկ խնամարկութեան տեղեր են եղած որբերի և այրիների համար. մեծն Ներսէսը չոր-

բորդ դարում «սահմանել և յամենայն դեօղս՝ վանս շինել, զի լիցի օտարանոցք, եւ տեղի անղեան Որբոց եւ Այրեաց անունողաց տածումն» [1]։

Գործունէութեան այս եղանակը, չնորհիւ հայի բնածին մարդասիրութեան, լաւ արդիւնքներ ընծայեց և այսօր Հայաստանի այլևայլ խորշերում հոդևոր իշխանութեան նախաձեռնութեամբ կամ մասնաւոր բարերարների տուրքերով վայելում են բազմաթիւ հայ որբանոցներ և մեր հնաշէն ու պատմական վանքերը, որոնք մի ժամանակ նաև գիտութեանց կենտրոն էին, այժմ գիշերւեան և խնամատարութեան նուիրական վայրեր են դարձած հայի վերջերումս կրած աղէտներից առաջացած թշուառութիւնն ամոքելու համար և նոցանում լուսի առկայծեալ պատրոյգը լուսաւորում է հայկական միգապատ հորիզոնը։

Մխիթարուինք յիշելով, որ վերջին երկու տարում, 1897 թ. ապրիլից մինչև 1898 թ. սեպտ.-ը բացուած վանական որբանոցների թիւը հասնում է 24-ի, որ սակայն շատ չնչին է համեմատելով ահագին կարեաց հետ և որոնք բաժանուած են հետևեալ կերպով.—

Կարին — Կարմիր վանքում		— 35	որբերով.
Վան — Վարագայ	»	— 60	»
» — Կարմրուրի	»	— 20	»
» — Սալնապատ	»	— 20	»
Աղթամար — Նարեկայ	»	— 20	»
Բաղէշ — Խնդրակատար	»	— 36	»
Մուշ — Առաքելոց	»	— 34	»
Տիգրանակերտ — քաղաք		— 34	»
Խարբերդ — Ղուլէի	»	— 35	»
Ուրհայ քաղաք		— 33	»
Սիւնիք	»	— 40	»

[1] Խոր. Գ. ի.

Եդեսիա — ս. Սարգսի վանքում	— 50	»
Մարաշ — քաղաք	— 80	»
Կ. Պոլիս — ս. Փրկչի որբանոց	— 80	»
Ըրմաշ — Դալրեվանք	— 20	»
Կարին — քաղաք	— 34	»
Կեսարիա — ս. Կարապետի »	— 45	»
Դաղատիա — ս. Աստուած. »	— 14	»
Ադրիանուպոլիս — քաղաք	— 20	»
Զմիւռնիա — քաղաք աղջկանց	— 49	»
» » տղայոց	— 50	»

Ասացինք, որ մխիթարական է այսքան որբանոցների գոյութիւնը, բայց եթէ այդ երևակայեալ հիացումը մի վայրկեան մոռանանք, պիտի տեսնենք, որ 36,000 որբերից հազիւ միայն 8—900 մանուկներ են խնամւում այնտեղ, իսկ մնացեալ ահագին մեծամասնութիւնը մնում է տակաւին անտէր և անօգնական ոչ միայն յիշեալ վայրերում, ուր կան որբանոցներ, այլև նոյն իսկ շատ տեղեր, օրինակ՝ Սեբաստիա, Մալաթիա, Զէյթուն, Ակն, Գիւրիւն, Երզնկա, Եւդոկիա, Ամասիա, Քղի, Տիվրիկ, Ընքուշ — Ամիշ, Առանա, Սղերդ, Շապին-Գարահիսար, Հաճըն, Քիլիս և Քէմախ և դուրէ դեռ շատ մեզ անյայտ տեղեր, ուր չէ տարածուած դեռ ևս վանական խնամատար ձեռքը...

Գիրք ս. քահ. ԱՂԱՆԵԱՆՑ